Հաստատված է 31.08.2022թ
մանկավարժական խորհրդի նիստում:
ՀՄՈՒ «Երևանի թիվ 2 ավագ դպրոց»-ի
տնօրեն՝ Հայանե Մարգարյանը

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

XI³ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍՂԵԿ՝ Գայանե Մարգարյան

« 2022 » - « 2023 »

ՈՒՍՏԱՐԻ

ԿՐԹԱԿԱՆ – ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱԿԶԲԻՆ	ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔ	ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔ	ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔ	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ
Կազմել աշակերտների անվանացանկը	Հետևել հաճախումներին և կանխել ուշացումները	Անցկացնել դասղեկական ժամեր /առկա և հեռավար/	Հետևել առաջադիմությանը և ուսման որակին	Ամփոփել ուսումնական տարին
Լրացնել տեղեկություններ աշակերտների մասին	Էլեկտրոնային դասամատյանում նշել բացակայությունները	Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում	Պարբերաբար կատարել դասալսումներ	Ամփոփել առաջադիմությունը,որակը
Վերստուգել դասարանի սոցիալական անձնագիրը	Հետևել կարգապահությանը, համաճարակային կանոնների պահպանմանը	Համագործակցել հոգեբանի հետ, համատեղ քննարկել հոգեբ հարցեր՝ նպաստելով անձի ձևավորմանը	Աշակերտների ելակետային մակարդակի վերհանում, շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	Տալ դասարանի ընդհանուր բնութագիրը
Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքների պլանը	Հետևել դասարանի մաքրությանը, ախտահանման աշխատանքներին	Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ	Կազմել հաշվետվություն կատարված աշխատանքի մասին

2. ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՆ	3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	4. ԴՊՐՈՑ - ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ
Դասարանում տարեսկզբին սովորում է 21 աշակերտ՝ 10 աղջիկ, 11 տղա :	1.Դաստիարակչական աշխատանքների հիմքում դնել անհատի ներդաշնակ և բազմակողմանի զարգացումը , որն իր մեջ կկրի իր ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային բարոյական և հոգևոր արժեքներ: Աշակերտների մեջ ձևավորել ազգային ինքնագիտակցության ոգի: Կազմակերպել այցեր / առկա,հեռավար (վիրտուալ) / պատմամշակութային, գեղագիտական կենտրոններ, ունկնդրել հոգևոր և դասական երաժշտություն: Ճանաչել մեր մեծերին (նշել հոբելյանական տարեթվերը):	1.Նպաստել դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծմանը, ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրմանը: Պարբերաբար հրավիրել առկա և հեռավար ծնողական ժողովներ: Քննարկել կազմակերպչական և դաստիարակչական հարցեր, նպաստել ծնողական համերաշխ կոլեկտիվի ձևավոր մանը:
Դասարանի ավագ է ընտրվել Նարեկ Վարդանյանը:	2. Գեղագիտական դաստիարակությունը ուղղել աշակերտների գեղագիտական զգացումների , կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը: Ձևավորել գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողություններ, գեղեցիկը ճանաչելու պահանջմունքը: Աշակերտների գեղագիտական ճաշակը զարգացնելու նպատակով կազմակերպել այցեր / առկա,հեռավար (վիրտուալ) / թանգարաններ,կինոթատրոններ, թատրոններ, ցուցահանդեսներ:Իրականացնել վիրտուալ այցեր, կազմակերպել ֆիլմերի և ներկայացումների դիտումներ և քննարկումներ,բանավեճեր:	2. Ըստ անհրաժեշտության անցկացնել զրույցներ ծնողների հետ, կազմակերպել ծնող-ուսուցիչ հանդիպումներ /նաև հեռավար/ :

Դասարանի աշակերտական խորհրդի անդամներն են՝ Խաչատրյան Աիդա, Հովհաննիսյան Լարիսա, Վարդանյան Նարեկ	3. Հզոր կամք և տոկունություն սերմանելով՝ ամրապնդել հայրենիքի հանդեպ սերը և նվիրվածությունը: Զնավորել անհատի քաղաքացիական դիրքորոշում, հայրենիքին արժանիորեն ծառայելու պահանջմունք: Աշակերտների ռազմա- հայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով անցկացնել զրույցներ երկրում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունների մասին, զարգացնել հայրենիքի նկատմամբ պարտքի զգացում: Ներկայացնելով պատմական էջերը՝խոսել հայ ժողովրդի անցյալ և նորօրյա հերոսների մասին: Դաստիարակել իրազեկված քաղաքացիներ:	3. Ժամանակին իրազեկել և մասնակից դարձնել ծնողներին դպրոցի առօրյային, առաջ եկած հարցերը քննարկել և համատեղ գտնել լուծում:
	4. <<Առողջ հոգի առողջ մարմնում>> արտահայտությունը կարևորելով և կյանքի կոչելով՝ ձևավորել ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ գրագետ մոտեցումը:Ֆիզիկական դաստիարակության օգնությամբ հետևել աշակերտների կեցվածքին, հիգիենային, առողջ ապրելակերպին:	4. Համագործակցելով ծնողների հետ՝ անհարգելի բացակայություն ները և ուշացումները:
Աշակերտները զուսպ են, կարգապահ և պարտաճանաչ: Ակտիվ են, նախաձեռնող և համախմբված:Միմյանց նկատմամբ հարգալից են, հոգատար և ջերմ:	5. Կարևորելով բոլոր մասնագիտությունները՝ օգնել ճիշտ կողմնորոշվել մասնագիտություն ընտրելիս: Առաջացնել հարգանք, սեր աշխատանքի և աշխատողի նկատմամբ: Դաստիարակել աշխատանքային պարտաճանաչություն, պատասխանատվության զգացում:	5.Հետևել աշակերտների կեցվածքին,արտաքինին,հիգիենային, Հագուկապին:

	6. Աշակերտների մեջ ձևավորել հայրենիքում տեղի ունեցող բնապահպանական խախտումները տեսնելու և գնահատելու կարողություններ, կանխել դրանք, վերացնել հետևանքները: Ուսումնասիրել ժամանակի էկոլոգիական խնդիրները, դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ: <u>Հետևել մաքրությանը :</u>	

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐԸ	ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ (դասախոսություններ,զրույցներ,դասղեկի ժամեր, էքսկուրսիաներ,դիտողական արշավներ և այլն)	ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԱՄԻՍԸ, ՏԱՐԻՆ	ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ
Սեպտեմբեր	Գիտելիքի օր <<Հովհաննես Այվազովսկի>>	01.09.2022	Դասղեկի ժամ
	Դասագրքերի բաշխում	01.09.2022	Դասղեկի ժամ
	Արժեհամակարգում գործող ազգային շեշտ	09.09.2022	Դասղեկի ժամ
	Ինչպիսի օգնություն ցուցաբերել սահմանում հարազատ ունեցող անձանց	16.09.2022	Դասղեկի ժամ
	Ծնող-երեխա փոխհարաբերություններ	23.09.2022	Դասղեկի ժամ
Հոկտեմբեր			
	Ուսուցչի օր. ուսուցչի դերը մեր կյանքում	30.09.2022	Դասղեկի ժամ
	Մասնագիտության կարևորությունը	07.10.2022	Դասղեկի ժամ
	Ընկերոջ կարևորությունը	14.10.2022	Դասղեկի ժամ
	Ազգային արժեքներ	21.10.2022	Դասղեկի ժամ
Նոյեմբեր			
	Մարդկային ակտիվության գրավականը	04.11.2022	Դասղեկի ժամ
	Հաջողակ մարդու որակներ	11.11.2022	Դասղեկի ժամ
	Հայ մեծերը (գործարարներ)	18.11.2022	Դասղեկի ժամ
	Ժամանակակից համաշխարհային գործարարներ	25.11.2022	Դասղեկի ժամ
Դեկտեմբեր			
	Մարշալ Հովհաննես Բաղրամյան	02.12.2022	Դասղեկի ժամ
	Երկրաշարժ	09.12.2022	Դասղեկի ժամ

	Արցախը Հայաստանի վահան (բաց դաս)	16.12.2022	Դասղեկի ժամ
	Նոր Տարին աշխարհի տարբեր երկրներում	23.12.2022	Դասղեկի ժամ
Հունվար			
	Աշխատանքային մոտիվացիա, ժամանակի կառավարում	13.01.2023	Դասղեկի ժամ
	Զրույց՝ նոր միջավայրում փոխհարաբերություններ ձևավորելու վերաբերյալ	20.01.2023	Դասղեկի ժամ
	Արցախյան երեք պատերազմների ներկայացում աշակերտների կողմից	27.01.2023	Դասղեկի ժամ
Փետրվար			
	Աշխարհը և մենք	03.02.2023	Դասղեկի ժամ
	Դպրոցական անցուդարձի քննարկում՝ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վերլուծում	10.02.2023	Դասղեկի ժամ
	Ազգային թե՞ ժամանակակակից տոներ	17.02.2023	Դասղեկի ժամ
	Իմ Թումանյանը	24.02.2023	Դասղեկի ժամ
Մարտ			
	Գրագիտությունը մեր կյանքում	03.03.2023	Դասղեկի ժամ
	Կնոջ դերը մեր կյանքում	10.03.2023	Դասղեկի ժամ
	Նպատակի սահմանում, կամքի ուժ, ձգտում լավագույնին	17.03.2023	Դասղեկի ժամ
	Արդարություն և իրականություն	24.03.2023	Դասղեկի ժամ
Ապրիլ			
	Հայ կնոջ նկարագիր	07.04.2023	Դասղեկի ժամ
	Լուսավորչական զրույց կախվածությունների վերաբերյալ	14.04.2023	Դասղեկի ժամ
	Զրույց անձնային հատկությունների և ռեսուրսների մասին	21.04.2023	Դասղեկի ժամ
	Հայոց Մեծ եղեռն	28.04.2023	Դասղեկի ժամ
Մայիս			
	Ճիշտ աշխատանքով կատարելագործվել և առաջ շարժվել	05.05.2023	Դասղեկի ժամ
	Հաղթելու համար աշխատել է պետք	12.05.2023	Դասղեկի ժամ
	Ամեն ինչ քո ձեռքերում է	19.05.2023	Դասղեկի ժամ
	Շառլ Ազնավուր	26.05.2023	Դասղեկի ժամ